

2213
L. XI. 3.



Աղի մը տպագրաց կիսան-
քի բարոյական առա-
ջին պայմանն է Միութիւնը :

« Միութիւն » ք մտն
տեղ ձրի կը գրկուի :

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

ՀԱՍՏԷ

M. A R C H A M

Poste Restante

ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբագր-
ութեան կը պատկանի :

Ա - ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1896 ԱՐԵՆՔ

ԹԻԻ 1

ՄԻՈՒԹԻՒՆ

« Միութիւն » ք իր վերնագը-
րով ցոյց կուտայ թէ՛ ինչ է հրա-
տարակութեան նպատակը : Արտա-
տաճան երկիրների մէջ մի քանի
յեղափոխական թերթեր կը հրատա-
րակուին . որոնք ժամանակին յարմար
ջանքերով և օգտակար հրատա-
րակութիւններով յաջողեցան զա-
րեքէ հետէ իսր քնի մէջ խոր-
գայտը Հայութիւնը արթնցնել ու
յեղափոխել : Արդարեւ այդ իրո-
զութիւնը չենք կարող ուրանալ .
բայց եթէ ցաւալի կէտեր կայ,
այն է թէ՛ մեր Գործիչները իր-
ենց՝ նախանձախնդրական կախ-
ներով խիտ շուտ յառաջ բերին
ժողովրդի մէջ կուտակեցական բա-
ժանումներ , որոնց հետեանքը
մանրամասնօրէն բացատրել հարկ
չենք համարիր , քանիտ մեր աչքի
առջև բացայայտ կը տեսնուի :

Երբ կը տեսնենք թէ՛ Հայ-
ութիւնը սաստիկ ճգնաժամի մէջ
է . մեր հաղարատը եղբայր ար-
եանց հետքը չէ կորստած , մեր մայ
րերի և քոյրերի սրտածմլիկ աղա-
ղակները կ'ըստին . կոտորածներ ,
առեւտրականութիւններ և բռնի կը-
օնափոխութիւններ կը շարունակ-
ուին , արխանարու թուրքը իր կրօ-
նի բացարձակ օրէնքով , կը փութայ
բնաջինջ բնեղ Հայ աւարը : Այս
ստակալի գրութեան մէջ իսկ մենք
փոխանակ միանալով Յեղափոխական
գործին աւելի զօրաւոր այժ քր տա-
լու , ընդհակառակը կը յանդգնինք

հասնողութեան ազգակործան ըն-
թացքին մէջ անդրդուելի մնալ , և
Հայութիւնը՝ որ դարերէ հետէ հա-
կառակ իր կրած բազմադիմի հա-
լածանքների , գրկանքների , իր աղ-
բութիւնը ու կրօնքը մինչև այսօր
պահած էր , այսօր մենք այդ ըն-
թացքով անուղղակի կերպով իբրեւ
սրտը դաւաճաններ կորստեան շա-
ղին մէջ խրել կը ջանանք զայն :

Ահա այս բանաւոր պատճառ-
ներն են որ առիթ ընծայեցին մեզ
ի լոյս ածել « Միութիւն » ք . որուն
նպատակն ու ուղղութիւնը պիտի
ըլլայ ժողովրդի ինչպիսի շահերը
պաշտպանել , իր նիւթական ու բա-
րոյական պետքերը մատակարարե-
լու միջոցներ ցոյց տալ և միա-
նալու գաղափարը պրօբականօք ը-
նել ժողովրդի մտն դաստակարգի
մէջ :

« Միութիւն » ք ըստ ժողո-
վրդի պահանջին՝ մտն ջանք ի
գործ պիտի դնէ ոչ միայն Յեղա-
փոխ . կուտակեցութեանց մէջ մի-
ութիւն յառաջ բերել , այլ ընդհ-
Հայութեան մէջ արտապետած կարգ
մը թերութիւնները բաւնալ , ա-
նոնց անշտաւած պէտքը միացը-
նել ու համեալ խօսէն գործել :

Միութեան խնդրը , ըստ
ոմանց որչափ դժուար կը նկատ-
ուի , այնչափ ալ դիւրին է եթէ
լինի գիշում և զոհողութիւն :

« Միութիւն » ք առ այժմ
ամիսը անգամ մը կը հրատարակ-
ուի և մտն տեղ ձրի կը դը-
կուի . փափաքողները պէտք է դի-
մեն լրագրիս ճակատը գրուած
հասցէին :

« Միութիւն » ի էջերը բաց
պիտի ըլլան մտն հայ անհատի
համար և մտն անոնց՝ սրբ կու-
ղեն իրենց գաղափարները պարզել
համաձայն թերթիս ուղղութեան .
բայց պետք է նկատի առնել թեր-
թի փոքր զիբքը և կարելի եղա-
ծին չափ հակիրճ գրել :

« Միութիւն » ի հրատա-
րակելու ծանր դարձը , զոր ու-
տանձնեցինք արդարեւ թէ՛ նիւթա-
պէս և թէ՛ մատուցապէս մեր կա-
նադրութիւնէն խիտ բարձր է . սա-
կայն մեր Աղգի մէջ միութիւն ա-
ռաջ բերել ցանկացող բազմաթիւ
Աղգայիների կրկնակի պահանջում-
ները ստիպեցին մեզ իրենց նպա-
տակին ծառայեցնել :

ՆԱՄԱԿ ՄԱՐՍԷՅԼԵՆ

Մեր գաղափարակից ըն-
կերներէն մին՝ հեռուեալ նամակը
ղբկած է մեզ ի հրատարակու-
թիւն :

Մարտի 3 Յունիս 1896

Հայեր

Խոր մթութեան մէջ կը թաւալինք .
թշնամին Սասունը կոտորեց , որուն
վրայ շատ ոգբայինք ու հառաչե-
ցինք . բայց որ՞ Պետութեան գութը
խկապէս շարժեցաւ դէպ ի Հայե-
րս :

Եւրոպայի Դիւանագիտական
տկումները Հայկական դատին վրայ
երկար խօսցան , ճառեցին և երեւա-

կայական հրամաններ տուին բայց ի՞նչ օգուտ երբ խնդրեց իրականին հասաւ, ոչինչ գուրս եկաւ :

Ընդունելու իր մեծ վերքը գարմանելու համար, Ընչակեան կուսակցութեան առաջնորդութեամբ՝ կազմակերպեց ի կ. Պօլիս Սեպտեմբերի մեծ Յոյցը (1) յորմէ կը յուսացուէր թէ՛ մեր ամեն բաղձանքները ու պահանջները դո՛ւստրամ պիտի տրուի :

Յոյցէն վերջը ամեն բան լրացած համարուեցաւ, ամեն Ընդիմութիւն սակաւ ինչ հանդարտ ըլլաւ : Բայց դժբաղդաբար ամէկ ինչ սին պատկերներ ու խաբուսիկ երազներ դարձան : Իրականը՝ ահագին մեծ վերք մը բացաւ : Ընդամասնը փոխանակ ծաղկաւետ գաղտնի ու գրախտի, աւերակախոսուց մը դառնալով գրեթէ անկէն դան վիճակի մը մատնուեցաւ : Ազատութիւն կամ մահ կը գոչէինք, ահա մահնէ որ կը ներկայանայ մեզ և մանգաղն ի ձեռին անխնայ կը հնձէ ու խալաւ ըզմեզ ջնջելու կը նկրտի : Եթէ սակաւ ինչ անտարբեր մնանք, թշնամիին ահաբեկ ոտը մեր գըլխի վրայ կախուած կ'սպառնայ տանել զմեզ դէպի յաւիտենական կորուստը :

Ուրեմն Եզրա՛րք . այլեւս խօսելու, գրելու և զեկզմեկ նախատելու ժամանակն անցած է. իրաց արդի անորոշ վիճակը բարւոքելու անհրաժեշտ հարկին մէջ կը գտնուինք. գործելու ժամը հասած է : Եկէ՛ք հայ եղբարք . միանանք ձեռք ձեռքի տանք մէկ սիրտ մէկ կամք աշխատինք, պաշտպան կանգնինք մեր եղբայրների և քոյրերի, որոնք արիւնի արբու թուրքի մերկ սրին տակ անմեղ գառնուկները պէս կը գոհուին : Այլ ևս բաւական համա-

րինք այս չափ աստելութիւններ, նախանձութիւններ և կուսակցական ընդհանրութիւններ. որոնք թշնամիին առաջնորդ տուած, իսկ մեր կենսական շահերը ոտնակոխ ընելու ծառայած են, ինչպէս ներկան կը խոստովանի :

Թողունք այդ կարգի վնասակար սողորութիւնները : Աւանք չըջահայեաց, և ներկայէն խրատ ունելով գտնէ ապագային վրայ լըջօքէն խորհինք . մեր ամբողջ ոյժերը կեդրոնացնենք մէկ տեղ, մէկ կեդրոն ունենանք . և ձեռնահաս անձերի աջակցութեամբ ներքին ոյժ գոյացնենք :

Այս ամենը իրագործելու համար անմիջական պէտք ունինք Միութեան. եթէ ճշմարիտ հայրենասէրներ ենք, ժողովրդի ամեն խաւերի մէջ տարածենք Միութեան գաղափարը, որով միայն պիտի կարենանք տեսնել լոյս և փրկութիւն :

ՏՐԴԱՏ

ԿՐԵՏԵՒ ՅԵՂԱՓՈԹԻՒՆՆԵՐ

Կրետէի յեղափոխութիւնը, որ Ըսէբայի դաշնագրութեան (*) առանձնաշնորհումները վերստին ձեռք բերելու համար, երկար տարիներէ ի վեր չէր դադրած, այժմ երթալով ծանր կերպարանք մը կը ստանայ, որ ոչ միայն Թուրք կառավարութեան գլխին նորանոր ցաւեր կը բանայ, այլ արեւելեան խնդրին ծագումն արգիլելու համար ամբողջ մեծ Տէրութեանց պաշտակութիւնները կը զբաղեցունէ ինչպէս Հայկական խնդիրը :

Կրետէի ընդհանուր կառավարիչ Ապոստոլա՛ն փաշան որ նոր գացած էր իր այդ պաշտօնատեղին. կարգապահութիւնը վերահաստատելու խոստումով. սակայն իր կառավարութեան ստացած հրահանգների համեմատ, այն աստիճան խիստ վարուիցաւ յեղափոխականների հետ, որ անմիջապէս ամբողջ կղզին անխնայականների կեդրոն մը դարցուց :

Այժմ Բ. դրան որոշմամբ Զէյթունի հայերի գէմ գրկուած վայրերի թուրք զօրքերը, որ Մարաշի շրջակայ գիւղերն աւերակ դարձուցին. աննկարագրելի ոճրագործութիւններ ու յարջոտակութիւններ ի գործ դրին. այդ կեղեքիչ հրէշները, իրենց անմարդավայել արարքների մէջ վարժուած ըլլալով միեւնոյն պաշտօնով զըրկուեցան ի կրետէ. ուր առանց թերութեան ցոյց տուին իրենց ամարդի քաջութիւնները. Գրիստոնէարնակ տաան և չորս գիւղերի վրայ յարձակելով սաստիկ կոտորիցին, աւարի առին և ապա կրակ ձգելով միւրիւր դարձապցին : Խեղճ գիւղացիները կիռամերկ և քաղցած վիճակի մէջ խոյս տուին լեռները :

Քրիտանա գաւառին մէջ ալ ուրիշ հինգ գիւղեր աւարի առին. այրեցին և քահանայ մասպաններով ազատ համարձակ վերադարձան իրենց տեղերը : Կըսուի թէ քրիստոնէաները, հակառակ ուրիշ ընդհարումների մէջ իրենց տարած յաղթութեանց, աղսանգամ չ'կարենալով թշնամիին ըմբռնել պարտուեցան. որովհետեւ օր առաջ սպառած էր իրենց ռազմավորները :

Թուրք կառավարութիւնը, երիտոնեաները ջնջելու գործին յէջ վարժուած ճիշդ, հայերիս գէմ գործադրած ծրագրին ուղղութեամբ կը շարժի կրետական խնդրին մէջ ալ : Տեղւոյն մեծ պետութեանց հիւպատոսները իրեն կառավարութեանց հրահանգով կըրկ նակի դմբումներ ըրին ընդհ. կասափարչին վերջնական պատասխան պահանջներն եթէ պիտի կա-

(1) Նշակ. կուսակցութիւնը անշուշտ բարեմտութեամբ կազմակերպեց ցոյցը, որպէս զի մեծ տէրութեանց ուշադրութիւնը հրաւիրէ դէպի հայկական խնդիրը. բայց հետեւանքը հակառակ դուրս եկաւ. հետեւաբանմեղաւոր չէ :

(*) Ըսէբա՛ կրետէի (խանիս) գլխաւոր քաղաքէն քիչ հեռաւորութիւն ունեցող գաղտնի մըն է, ուր գարնան կղանակիւ կը բնակին Եւրոպացի հիւպատոսները : 1878 ին Հոս ստորագրուեցաւ դաշնագրութիւն մը, որ իրաւունք կուտայ երկրային խառն ժողով մը ունենալ և ռահմանագրութեամբ կառավարուիլ :

բենայ մոլեռանդ թուրք խաժանը զսպել ու կոտորածները ընդհուպ դադարեցնել . նա հանգարտութեամբ կը պատասխանէ թէ՝ գաւառների մէջ եղած կոտորածներէն երբէք տեղեկութիւն չունի : Լոկ անխմտ խոստումներով զօրքեր կը շրջէ քրիստոնէից կեանքը , ինչքը ապահովելու պատրուակով . իսկ միւս կողմէ իր գաղտնի թելադրութեամբ զօրքերը գաւառների մէջ պէնկապցիւն և տեղացի թուրքերի հետ միանալով սովորական յաբշտակութիւններով սպաննութիւններով իրենց պարտականութիւնը կը կատարեն :

Այսպէս կրետական խնդիրը քր կարեւորութեամբ մեծ Տէրութեանց առջև պարզուած և օրուան խնդիր դարձած է , այսուհանդերձ մենք համոզուած ենք թէ՝ Եւրոպացիները ինչ որ ըրին հայերիս համար , նոյնը պիտի գործեն խեղճ կրետացիների համար ալ :

ԳՈՅԺ

Վայրագ թուրքը կը տեսնէ որ Ընչ Ընկէն , Սերայ , Պուլկար և Տուրս յեղադրութեանները իր երկրի ամեն սահմանագրութիւնները շրջապատած ծայն կը բարձրացնեն , արդար իրաւունքնին կը պահանջեն , և իրենց հրացանների մուխերով կը սպառնան զինքը խեղդել : այլ ևս ինքն ալ հաւատաց թէ այս անգամ եւրոպական իրեւանադիտութիւնն ալ պիտի անկարողանայ զինքը փրկել այդ բիրաւոր յիշատակականների ճիրաններէն (պիւր փափաղ հեծեալներն զբոց քէօքէյէ (զանոնք սարսափեցնելու և վանելու ուրիշ միջոց չըզտնելով դարձեալ ձեռք առաւ իւր սովորական վայրագ մէթոտը :

Ընկալելով Ընկենական մամուլին ծանոյց թէ՝ յունիս 3 երկուշաբթի օրը լուիկ մեջիկ , առանց Եւրոպացի պետութեանց զեռ պանների և առանց մէկի գիտութեան տաան և մէկ անմեղ հայեր քանտին խորերէն արշալոյսին ըստ

Եւրոպ . ժամ 3 ու կէսին առաջնորդուեցան Գարաքէօյ . Ազատգարու . Սուլթան Պայազիտ . Իսկիւտար և այլ տեղեր կախաղան հանուելով՝ դիակները ամբողջ 3 ժամ կախաղանի վրայ մնացին ընդհ . հասարակութեան սոսկալի զայրոյթ պատճառեց թիւրքերի այս վայրենութիւնը : Իւրաքանչիւր դատապարտեալի վճռագիրը իւր կուրծքի վրայ զետեղուած էր , որպէս թէ՝ այդ դժբաղդ անմեղներն էին Շահապալի , Գարահիօղեանի և ոստիկանութեան պաշտօնեայ էմինի սպաննութեանց հեղինակները :

Մինչդեռ սպաննութեանց հեղինակները թիւրքիայէ դուրս ազատ երկիրների մէջ կապրին :

ՎԱՆԻ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Վանին առնուած հեռագիրով կը ծանուցանէ թէ՝ յիսուսի չափ զինեալ հայեր Պարսկաստանէն անցնելով Վան քաղաքը մտան և տեղւոյն բնակիչ հայերը ի զին կոչեցին . բազմաթիւ քիւրտեր քաղաքը շրջապատելով և սպառնացան նոր կոտորած : Անգլիոյ և Ռուսիոյ հիւպատոսները , որոնք միայն կը գտնուէին հոն , հեռագրեցին ի կ . Պուլիս թէ՝ իրաց վիճակը տարափելի և վտանգաւոր է . առ այս չըջակայ գիւղաքաղաքներէն փութանակի զօրքեր շրջապատելու համար , սակայն պատերազմը տեղի ունեցաւ խիստ արիւնահեղ և ամբողջ 10 ժամ տեւեց . երկու կողմէն հազարի չափ սպաննուածներ և շատ վիրաւորեալներ ինկան պատերազմի դաշտին վրայ :

Թէև մանրամասնութիւններ կը պակսին , բայց կըսուի թէ թուրքերին կողուտը խիստ մեծ եղող է :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԻԱՅԱՆ ԼՈՒՐ

Տեսէք թէ խորամանկ թուրքը Եւրոպացի առջև ինչպէս կը ներկայացնէ կրետէի յեղափոխութիւնը :

Կրետէի Մինչլոցի գիւղին մօտ բաղխում մը տեղի ունեցեր է զօրքերի և ազակների հրստախմբի մը հետ . այս վերջինները պարտուած են : Քրիստոնեաները ներկայանալով տեղական իշխանութեան յանուն քրիտոնեայ բնակիչներին իրենց երախտագիտական զգացումները ցոյց տուին առ Օսմ . պետութեան , աւելցնելով թէ իրենք երբէք չեն համակրած և ոչ յարանմութիւն կուղեն ունենալ այդ կարգի խռովարարների հետ :

Ընդհ . անգործութիւն կը տիրէ թէ՝ խանիայի և թէ՝ շրջակայ գիւղերի մէջ :

ՌՈՒՍԻԱ ԵՐ ԿՐԵՏԷ

Ռուսիա վերջին ծայր լրջութեամբ կը դիտէ կրետական խնդիրը : Վերջերս կրետէի վիճակը ստատիկ անհանդարտ վիճակի մէջ տեսնելով , Գաղղիոյ աջակցութեամբ ամեն տեսակ աշխատութիւն չխնայեր , որպէսզի կրե էի յեղափոխութիւնը հանդարտեցնէ և կ . Պուլիս ու Սթեմբի միջեւ պատահական ժխանագիտական ընդհանրում մը արգիլէ : Այս աթիւ գաղտնի բանակցութեան պաշտօնագրեր Ռուսիոյ և Բ . Դրան միջև անընդհատ կը փոխանակուին :

Կրետէի կառավարիչ Ապտուլլահ Փաշան նոր զինուորական ոյժ պահանջեց Բ . Դունէն , հետեւաբար 700 ալպանացի թուրք զօրքեր Բրէվէզէն կրետէ շրջապատեցան :

— Սուլթան համիտը որոշել է Լոնտոնի Անգլո — Արմենիան կուսակցության պատգամաւորութիւն մը գրել և հրաւիրել անոր երկու անդամները ի' կ . Պօլիս , որպէս զի բանակցութեան մասնելով հայկական խնդրին գոհացուցիչ վերջ մը տան :

— Կայսերական իրատէ մը կը հրամայէ Զեյթունի Քրիստոնեայ կառավարիչ մը ընտրել :

— Տեղւոյս « ՄԻՐԻՐ » թերթը հետեւեալ թրքական լուրը կ'հրատարակէ :

Ինչպէս յայտնի է , Ալի փաշա խանը աշխատող Յովնէփ կաթապետեանը և կէտիկ փաշա կոչ կակար Ռոտոսթոցի Գիորգը որուն կեղծ անունն է (Լեւոն) , այս երկու յեղափոխական հայերը վերջերս սպառնալից նամակներ խմբագրելով , Ղալաթիա եէնի խանի մէջ սեղանաւոր Շահպադեանի ֆիքստիւնը դրամ պահանջած էին այս առթիւ ոստիկանութեան պաշտօնեայ Ղալիպ էֆէնտին՝ զերենք ձերբակալելու պահուն սպաննուեցաւ . հետեւաբար եղեւ նախատ ատեանը մահուան դատապարտեց զանոնք և մահուան վճիռը այսօր գործադրուեցաւ կախաղան հանելով այդ երկու ոճրագործները :

— Թուրք զապթիյնները , Քարասօթօքի մօտ ճանապարհին վրայ Բրեզրենի ի Միտրօպօլիտը սպաննելու փորձ ըրին :

— Սուլթան համիտը , իր լծին տակ հեծող Քրիստոնեայ ժողովրդի Պատրիարքներէն պահանջեր է գահաւակութիւն յայտնող պաշտօնաւորներ , բայց պատրիարքները մերժեցին այդ առաջարկը :

Պուլկարիոյ Մակետոնական կեղրանական գոմիգէն մեծ ցոյց մը կազմակերպած է ,որ մօտերս տեղի պիտի ունենայ ի վառնա :

Կը հաստատուի թէ՛ կառավարութիւնը որոշեր է արգիլել :

* *

— Ըալէպէն կը հեռադրեն թէ՛ Սուրիոյ յեղափոխութիւնը երթալով ծանր կերպարանք կստանայ : Տրուզների և թուրք գօրքերի միջև նշանաւոր պատերազմ մը տեղի ունեցաւ . այս վերջինները չկարենալով դիմարկել պարտուեցան : Տրուզները չորս թրքական զօրազնդեր զինաթափ ըրին և շատը գերիներ առին չորս հաս ալ թնդանօթ դրաւեցին : Թուրքերի տուած կորուստը խիստ մեծ է :

— Տէյլ — Նիւզի կ . Պօլսի թղթաւիցը . կախաղան բարձրացող հայերի և թէ՛ հանապաղօրեայ բազմաթիւ ձերբակալութեան մասին գրելով կըսէ թէ՛ թուրքը առանց բանաւոր պատճառների հայերը չափազանց կը ճնշէ և կը դատապարտէ , որպէս զի մնացեալ ոչ յեղափոխական ժողովուրդը օրինակ առնելով հանդարտ նստի : Ասոնք ալ բաւական չհամարելով Բ . Դուռը կ'արգիլէ քանի մը զերմանացի և այլ մարդասէր եւրոպացիներ , որք ուզած էին որը հայ տղայք եւրոպա դըրկել ու պաշտպանել : Մոյն խոսք Մարաշի Ամերիկացի միսիօնարի Տիկինը որ իւր զուակներով կը ուզէր տեղէն հեռանալ , անկաւելի արցաւ զառանց Միացեալ Նահանգներէ դեսպանի միջամտութեան :

— Թուրքո — հսկենական սահմանազլխին վրայ թուրքի զինուորական ոյժը բազմապատկուած է վախճալով թէ մի գուցէ Յոյն Յեղափոխականներ զուրս գալով Մակեդոնիա մտնեն :

— Կրետէի վաւրուլիա ըսուած տեղը թուրք կանոնաւոր զօրքերի և քրիստոնէից մէջ սաստիկ կռիւ մը տեղի ունեցած է , յորմէ յառաջ եկեր է 300 թուրքերի ճամբորդութիւնը դէպ ճէննէթի դուռը :

— Կ . Պօլսէն կը գրեն թէ՛ Գալօլայի մօտ 2 . Սերպ և մի եւաղլիացի տիկիններ կը կառքով պրոյտի ելած էին , առեւանգուե-

կցան տաւ և հինգ թուրքերէ բաղկացեալ առաջակախմբէ մը , որ փրկանք կը պահանջէ 2000 Սաւ . ոսկի :

— Անգլո — Արմենիան գովիթէն Լոնտոնի մէջ հանգանակութիւն մը բացեր է ի նպաստ կրեալէցիների : Ընկենական մամուլը մեծ գովեստով խօսեցաւ այդ ձեռնարկին համար :

ՀԵՈԱԳՐԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վանի մէջ նոր սարսափելի կռիւ մը ծագելով 400 մարդեր ըստ պահանջած են : 00 հայեր ալ դէպի պարսկաստան մանապէս խոյս տալու ժամանակ շատ խլամ գիւղեր այրեցին :

— Կ . Պօլսէն կը հեռադրեն թէ՛ Եռւմանարի Էֆ . Զեթօնի կառավարիչ ընտրուած է :

— Ըռչակաւոր մասնիչ սենեքերիմի սպաննող Գարեգին Թուֆուլեան՝ կ . Պօլսոյ մէջ կոխաղան հանուելով նահապետուեցաւ : Այս Գարեգինէն առաջ երկու հայեր ևս կախուեցան :

— Սուլթանի հրամանով Քուր տերի նոր խումբը կողմակերպուած է :

— Աղատական Թուրքիոյ Սուլթանին ծանուցաւոր մը շրկելով , կատալարութեան արդի (դիթիւմ) միտիւղու բաղձանք յայտնած են :

— Սերասիալէն , Նիկիտարէն , Թրապիզոնէն , և Տիգրանակերտէն կը գրեն թէ այդ տեղերի կառավարներ ճիշտ անցեալ տարուան նմանն է : Թուրք կառավարութիւնը 12 վաշտ լէտիֆ իդէն կոչեց :

ԶԳՈՒՇՈՒՄԻՒՆ — Երկար տարիներ Աթենք ժամադրութեամբ զբաղող թիապայն , բիշ նիհար և միջահոտակ Բօյ Տաքեսեանը որ մօտերս քաղաքէն բաւական դրամ շրթելով անհետացած էր : Այժմ կը լսենք թէ՛ այդ վատը կ . Պօլսի գացած է նախորդ Աթենքի գետնան Շաքիի փաշայի Տէնը հիւրասիրուած և հայ հարստաները լրտեսելու բորձը պաշտօնը ստանձնած է :

« ՄԻՐԻՐԻՆ » ի նորահաստատ պարանք տաւերի նուազութենէ տոխուած է , շատ տեղեր փոխանակ գլխաղրի բոլորապիւր և փոխ . բոլորապիւր գլխաղրը գործածել : Թող ներեն ընթերցողները :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԻՐԻՐԻՆ » ի